«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 83/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 15.08.2023թ. ժամը 15:00

Համաձայն՝ 09.08.2023թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ստացված «Ինեկոբանկ»ՓԲ ընկերության թիվ 1716 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Օգոստոսի 15-ին, ժամը 15-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ «Ինեկոբանկ»ՓԲ ընկերությունը
Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝ Բագրատ Վահրադյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու՝ «Ինեկոբանկ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ՝Հարություն Մարգարյանը
ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. 09.08.2023թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ստացված «Ինեկոբանկ»ՓԲ ընկերության թիվ 1716 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանի գործողություն-ների /անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնների հնարավոր խախտման վերաբերյալ կարգապահական վարույթ անցկացման հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց ներկաների ինքնությունը և նշեց,որ պատշաճ ծանուցված վարույթի բոլոր մասնակիցները ներկայացել են հանձնաժողովի նիստին և նիստը կարելի է շարունակել: Նախնական խոսքից հետո նախագահողը դիմումը և պահանջը հակիրճ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատու՝ «Ինեկոբանկ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ՝Հարություն Մարգարյանին,ով մասնավորապես նշեց,որ ներկայացված սնանկության գործով բանկը հանդիսանում է ապահովված պահանջատեր:Ներկայացված պահանջի մասնակի բավարարման նպատակով կառավարիչ կողմից 2020թ-ին կազմվել է բաշխման ծրագիր,ըստ որի բանկին պետք է փոխանցվեր `13 304 972 ՀՀ դրամ,որը չի կատարվել կառավարչի կողմից:

Պահանջատիրոջ կողմից 2021թ-ի հունիսի 04-ին հաղորդում է ներկայացվել հանցագործության մասին,որի հիմքով հարուցվել է քրեական գործ ապացուցվել է,որ կառավարչի կողմից հատուկ հաշվի գումարները կանխիկացվել և օգտագործվել են այլ նպատակներով,դրանով առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելով բանկին:

Սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանը իրեն մեղսագրվող արարքում ընդունել է իր մեղքը,իսկ քրեական գործը այժմ գնվում է դատաքննության փուլում:

Դիմումատուն նշեց նաև որ չնայած այն փաստին որ կառավարչի կողմից այս ընթացքում վերայկանգնվել է վնասը 9 700 000 ՀՀ դրամի չափով,իրենք որպես պարտատեր կորցրել են վստահությունը կառավարչի նկատմամբ և մինչև անգամ վարույթում առկա գույքի հրապարակային սակարկություններում գնելու հարցում,վստահ չեն որ առաջացած միջոցները չեն առժանան նույն ճակատագրին ինչ նախկինում առաջացած դրամական միջոցները:

Ավարտելով դիմումատուի ներկայացուցիչը մեջբերեց դիմումի պահանջը,այն է.

- *... Բագրատ Վահրադյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ,կիրառել կարգապահական պատասխանատվություն,ինչպես նաև վերջինիս հեռացնել «Ինեկոբանկ»ՓԲԸ,որպես պարտատեր սնանկության բոլոր վարույթներից/այդ թվում նաև թիվ ՍՆԴ/2192/04/19 սնանկության գործից/:*

Դիմումատուն հանձնաժողովին ներկայացրեց,որպես ապացույց՝մեղադրյալի հարցաքննության արձանագրության և մեղադրական եզրակացության լուսապատճենները, ինչպես նաև 03.05.2023թ-ի ինտերնետային ծանուցումը հրապարակային սակարկությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահն իր բացատրությունները ներկայացնալու համար ձայնի իրավունք տվեց սնանկության գործով կառավարիչ Բ.Վահրադյանին,ով մասնավորապես նշեց,որ այո դիմում նշած փաստերը իրականություն են,որի մանրամասները քննվել են քրեական գործի շրջանակներում և աժմ էլ քննվում են դատարանում,նա նշեց նաև որ իր կողմից վնասը փոխհատուցվում է և արդեն փոխհատուցվել է 10.1 մլն.դրամի չափով,մնացած մնացորդը 3 194 972 ՀՀ դրամի չափով ինքը հույս ունի փոխհատուցելու իր վարձատրությունների հաշվին, այդ թվում նաև այն վարույթներից ստացվելիք,որտեղ պարտատեր է հանդիսանում դիմումատու բանկը,մասնավորապես ներկա պահին հայտարարված աճուրդներով /մոտ 23 մլն.դրամ/ արժողությամբ անշարժ գույքը բանկը ցանկություն ունի գնելու,որիպիսի պանահանջի բավարարումից առաջացած կառավարչի վարձատրությունը ինքը պատրաստ է ամբողջությամբ փոխանցել որպես վնասի փոխհատուցում:Կառավարիչը ներկայացրեց հանձնաժողովին վերջին վճարման անդորագրերը՝ 410 000 ՀՀ դրամ գումարի:

Նշվածի վերաբերյալ կարծիք հայտնելու համար ձայնի իրավունք խնդրեց դիմումատուի ներկայացուցիչը և ասաց,որ բանկը ունի ցանկություն գնելու անշարժ գույքը,բայց վստահություն չունի,որ առաջացած միջոցները կառավարչի կողմից չեն վատնվի,իրենց պահանջի բավարարման փոխարեն,դրա համար էլ չի գնում գույքը:

Հանձնաժողովի նախագահն արտահայտվեց,որ ինքը կարող է անձնական երաշխիք տալ բանկին ,որ իրենց վերահսկողության տակ բանկի գույքի գնումից հետո կառավարչի կողմից կկատարվի օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերը և բնականաբար բանկին հասանելիք գումարները սամանված կարգով և ժամկետներում կվոխանցվեն պարտատիրոջը այդ թվում նաև առաջացած վարձատրությունը,որպես նախկին պարտքի մարում:

Բանկի ներկայացուցիչը արտահայտվեց,որ ինք նման որոշումներ կայացնելու լիազորություն չունի, բայց կվոխանցի առաջարկը համատատսխան որոշումներ կայացնող աշխատակից-ներին,հետագա որոշումներ կայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահն հարցեր տալու և կարծիքներ հայտնելու համար դիմեց հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովի անդամ Հ.Գևորգյանը հայտնեց,որ իր կարծիքով չնայած այն փաստին որ գործը գտնվում է դատական քննության փուլում և ոչ մի փաստ վերջնական ապացույցի կարգավիճակ չի ստացել,բայց կառավարչի կողմից ընդունվել է մեղքը և կարելի կարգապահական վարույթում ընդունված փաստ համարել պարտատիրոջը վնաս հասցնելու փաստը,որը կառավարիչ վարքագծի կանոների «Սնանկության մասին »ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում է:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը հայտնեց,որ լսելով կարծիքները ուսումնասիրելով դիմումը,բացարությունը և վարույթին ներկայացված փստաթղթերը գալիս է այն կարծիքին,որ կառավարչի կողմից կատարած արարքը չի բխում կառավարիչների հանդեպ վստահության ձևավորման ոչ մի կանոնից,այսինքն այդ արարքով պարտատիրոջ մոտ ձևավորվել է կարծիք որ հետագա գործունեության ընթացքում էլ կառավարիչը չի կատարի իր լիազորությունները, որպիսի կարծիքը բարձրաձայն հայտնեց նաև դիմումատուի ներկայացուցիչը:Նշվածի հիմքով հանձնաժողովի անդամը առաջարկեց հատարարել կառավարիչ՝ Բ.Վահրադյանին նկատողություն և հանձնարարել կարճ ծամկետում վերացնել հայտնաբերված խախտումը,այն է՝փոխհատուցել պատճառված վնասը ամբողջությամբ:

Հանձնաժողովի անդամ՝Տ.Հարությունյանը նշեց,որ լսելով կառավարչի բացատրությունը, ուսումնասիրելով գործին վերաբերվող փաստաթղթերթը հասկանալի է դառնում,որ բողոքի առիթ է հանդիսացել այն փաստը որ կառավարչի կողմից կատարվել է հանցավոր արարք և պարտատերը կորցրել է կառավարչի նկատմամբ վստահությունը,ուստի գտել է,որ կարգապահական վարույթի հիմքով կարող է հեռացնել կառավարչին այդ և մնացած գործերի վարումից:Դիմումի նշված պահանջի վերաբերյալ հայտնեց որ կարգապահական հանձնաժողովը կամ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ն նման լիազորություններ չունեն,իսկ կառավարչի սնանկության գործում լիազորությունների դադարեցումը բացառապես դատարանի լիազորությունն է,ըստ «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի սահմանած կարգով:

Անդրադառնալով դիմումատուի նշված վստահության և «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված կառավարչի համար պարտադիր վարքագծի կանոնին,այն է.

- **նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:**

հանձնաժողովի նախագահն հարկ համարեց ներկայացնել,որ ընդհանուր առմամբ կառավարիչը իր գործունեության պետք է իրականացնի հետևյալ սկզբունքներից ելնելով՝

1.Անկախության,
2.Օբեկտիվության,
3.Բարեխղճության,
4.Ողջամտության,
5.Արդյունավետության,նշված սկզբունքների պահպանությունն է բերում կառավաչի գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Վերլուծելով կառավարչի գործողությունները այս սկուզբունքներից ելնելով,կստացվի որ կառավարիչը գործել է անկախ ելնելով օբեկտիվ իրավիճակից,բայց չի եղել բարեխիղճ չի պահպանել օրինականությունը և կողմիերի օրինական շահերը, չի ցուցաբերել ողջամտություն իր գործունեության արդյունավետությունը ապահովելու համար,այսինք դրամական միջոցների բաշխումը չի կատարել ճիշտ և սահմանված ժամկետներում,որը հետագայում չէր կարող ապահովել նաև սնանկության գործի արդյունավետ շարունակությունը:

Վերոնշյալի հիմքով հանձնաժողովի նախագահն առաջարկեց հայտարարել``Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանին հայտարել նկատողություն և սահմանել ժամկետ կարգապահական խախտումը վերացնելու համար:

Հանձնաժողովի ներկա անդամներից Ա.Ադամյանը համաձայնեց այդ կարծիքի հետ և առաջարկեց,որ այդ առաջարկը , դրվի քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 09.08.2023թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ստացված «Ինեկոբանկ»ՓԲ ընկերության թիվ 1716 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով,Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ

ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանի գործողությունների /անգործության/մասնագիտական վարքագծի կանոնների խախտման և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 4-րդ ենթակետի հիմքով՝Ա/Ձ Արկադիկ Միշայի Ավդալյանի թիվ ՄՆԴ/0158/04/19 սնանկության գործով կառավարիչ՝Բագրատ Վահրադյանին հայտարարել նկատողություն և սահմանել ժամկետ կարգապահական խախտումը վերացնելու համար:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան